

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ր Ա Ր Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 44

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուրժեան մը առքիւ (հորհրդածութիւնք) ՏԻԳՐԱՆ ԵՆՔԷՆՃԵԱՆ: — Վոսփորեան Նամականքի. ՄԵՆԱՍԷՐ. — Մօրիս Ռօլիմա (Իր մահուան առքիւ) ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ: — Անոր ժայի: քը (Բանաստեղծութիւն) ՏԻՐԱՅԻ ՎԱՐԴ: — Գաւառային Դրականութիւն. «Նշանուած ա: մօլը». (Բ. Եւ վերջին մաս) ՇԱՀԱՐԻԿ: — Տխուր համերգութիւն (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ: — Լիլիէն Մօրիս (Վեպ) ՀԷՆՐԻԻ ՍԷՆՔԻԷՎԻՉ. քարգմ. ՉԻՖԹԷ-ՍԱ: ԲԱՅ: — Խմբագրական Նօթեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դր. Եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթաստանի ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու: քիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առար: կութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ: մաններով:

Ձեռն-Քէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه مى اداره مى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դաւաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդորից ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Յօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկլալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսպորտները, Հալը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնագրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳՅՈՆԻԿ ՕՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է գիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Դ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances g n rales Maritmes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցե. — Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօյիւք Եըլտըզ խան, թիւ 14, Լա Դօնֆրանսա ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը հղող անքիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուն:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Դ Գ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Դ Գ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան Ձեւը կ'նայն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻ եւ ՎԵՆԱՍԱԿԱՐ դուրեամբ զուծող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համաժ, Բասաժ Բաքրեք Օղլու:

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: Դորձակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏՄԱՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկապահ Դեպոյ անտան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանեան աբաւքուման

Պալապեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Ներքը շաբթի մինչեւ ժամը 5: Դիչերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չիւսած ակոսները: Յորեկները ակոյալ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախտալ է:

Աղբասներուն մօտ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-իողոց թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Դորձածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

Եթե երախայ մը նիհար է և չի զաւարիը նէ, անործակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակուսիները — որոնք չեն մեծնարկոր նէ — ոչ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող երեսն տրուի:



SCOTT'S EMULSION.

Աօրկայ մանկանց համար անործակի կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն իմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սայրը շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը, անմիջապէս կը դադարին. որպէս թէ նոր արիւն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչեղով մանկան արտերը առողջութեան և դուարողութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուսելիք և) ըմպելիքին և անործակով կրնա՞ն. Կրկնի զաւարել և պզտիկ ճերմակ ակուսիները առանձնաւոր և վիշտերու կ'ընկան երեան ելլել: Ըսգթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւնն և զաւարում կուտայ, մարտողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւնն կը պատճառէ:

ԸՍԴՌՈՒԹ ԲԱՂԱԹՐՈՒԹԻՒՆ

բոլոր աղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդազոյն երեղթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըսգթի Բաղադրութիւնը վրան այս նշանով վարդազոյն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ծանցուի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

Բոլոր գեղարարները և գեղարարները ինչ քերէն:

ԴԱՇՆԱԿԱԶԱՐ երիտասարդ մը, որ եւրոպայի մէջ ուսումնասիրութիւններ կատարած է, պատրաստակամութիւն ունի արցելութեամբ դասեր տալ դպրոցներու եւ տուներու մէջ մասնաւորապէս մէթոտի մը համաձայն որ աղէկ եւ արագ կերպով կը սորվեցնէ դաշնակահարութիւնը: Պէտք ունեցողները կրնան դիմել Մասիսի խմբագրութեան:

„AU TALON D'OR“ ՕԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՐԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉՍՓՈՒ ՎՐԱՅ

Կալաթա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորածնութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վաճառատունը:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Դնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱ. ԴՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիշին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ճէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաձեւեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Նգիպուս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրաւաճառ Միսաք աղային:

ՄԱՍԻՍ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 44

1 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԼՈՌԻԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻԻ

(ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ)

Ոսկեդարու լեզուին «ամենակարողութեան» հռչակումը Յ. Գուրգէն էֆ.ի կողմէ, առիթ տուած էր մեզ ներկայացնել իրեն՝ հրապարակային առաջարկութիւն մը:

Հարկ չկայ հոս երկարօրէն կրկնել անցեալը: Խնդրած էինք դրաբարի համբաւեալ Ուսուցիչէն՝ Ռաուլ Բօնչօնի մէկ ոտանաւորին թարգմանութիւնը՝ Կիսադարու լեզուով: Յոյս մը ներելի էր ունենալ թէ հայերէնագէտ էֆէնտին, Ոսկեդարը միանգամ ևս պանծացնելու համար, պիտի չխորշէր ընել հրապարակային գործնական ցղուում մը, իրմէ խնդրուած թարգմանութիւնը տալով ի ճաշակումն բանասիրաց: Ո՛րչափ ալ ծանր գործ մը ըլլար իրեն համար լող դալ Բօնչօնի Bain de Merին մէջ, սակայն իր սուրբ ու հին դաւանանքը զամենակարողութենէն Կիսադարուն՝ իր վրայ պարտք կը դնէին նա՛մէն զոհողութիւն յանձն առնուլ, և թող չտալ որ կասկածի ենթարկուի իր ծանօթ վարդապետութիւնը, զոր աշխարհի հովերուն սերմանեց իր երեքտասան—յօդուածեան ճառերով: Նա Ա. Թարգմա՛շաց ժամանակին վերագրեց այնպիսի կարողութիւն մը, որուն հաւատալու համար չատ մը միտքեր կը տատամէին, և ստոյգ ասպոյցոյցներով կ'ուզէին հաստատուած տեսնել զայն: Վարպետին վրձնիւր վճիռ էր, և իբրեւ պատուաւոր անձ, տէ՛րն էր իր խօսքին: Սակայն ե՛կ տես որ Գուրգէն էֆ. իր վարդապետութեան տեսականին և եթ պաշտպան՝ զլացաւ կամ տկարացաւ անոր գործնականն ի ցոյց դնել: Անկիւնէ մը միայն լսուեցաւ թէ գործնական

ասպոյցոյցներ տրուած են եղեր ժամանակին: Սակայն ակնարկուած ասպոյցոյցները, բոլո՛րն ալ անարժէք, քաջ իսկ ծանօթ էին մեզ, և մեր կողմէ խնդրուած ասպոյցոյցը չէր նմաներ հիներուն. այսինքն դասական բնագրաց թարգմանութիւններէ տարբեր բան մ'էր: Ինչ եւ իցէ, այսօր ա՛լ կարելի չէ սպասել որ Գուրգէն էֆ. չոր խօսքերէ անդին անցնի և Բօնչօնը Մեսրոպացուցած ներկայացնէ բանասիրաց:

Այս տեսակէտով՝ անտեղի կ'ըլլայ հրաւերի կրկնում մը մեր կողմէ. մանաւանդ պատշաճ ալ չթուիր՝ դժուարին կացութեան մը հրապարակային խոստովանութիւնը պահանջել: Կը ցաւինք միայն հաստատուով սա՛ իրողութիւնը թէ՛ ամենակարողութեան վարդապետութենէն շլացածներ, որոնք բազմաթիւ էին, սոսկալի պատրանք մը կրած եղան, և, ինչպէս կը պատահի մեծադոյն պատրանքներէ վերջ, իրենց ծայրայեղ լաւատեսութիւնը փոխուեցաւ ի յուսահատ յուռետեսութիւն թէ՛ վարդապետութեան և թէ՛ վարդապետին նկատմամբ: Այսպէս, կիրքոտ փաստաբաններ, չափէն աւելին ուղեւոր ապացուցանել, յաճախ վտանդի կ'ենթարկեն իրենց դատը. մինչդեռ չափաւոր պաշտպանողութեամբ մը պիտի հասնէին իրենց նպատակին:

Բայց Ոսկեդարու պատուոյն նախանձախնդիրք պէտք չէ վարձուրին: Նախ՝ զի այսօր, նո՛յն իսկ Գուրգէնեան տկարացումէ մը վերջն ալ, Ոսկեդարը ոչինչ կորուսած է իր իրական պատուէն: Եղածն ուրիշ բան չէ,

բայց եթէ անխոհեմ չափազանցութեան մը վերածումն իր բնական չափուն։ Հանրածանօթ հայկաբանին վայել չէր ո՛չ այնչափ յառաջամուկ ըլլալ իր անհիմն տեսութեանց մէջ, ո՛չ ալ այսչափ ակներև կերպով յետնիլ։ Երկրորդ պատճառ մը որ պէտք է սիրտայ Ոսկեղարու համակրողաց, ա՛յն է թէ՝ Գուրգէն էֆ.ի սկաւառումը անպատճառ չի նշանակեր Ոսկեղարու սկաւառում. այսպէս նկատել՝ ընդունել պիտի ըլլար թէ Գուրգէն և Ոսկեղար նոյն և մի են։ Ի՜նչ լիցի։ Ոսկեղարու ճակատագիրը մենք չենք ուզեր կապել ճշմարտագանց քարոզիչի մը ճակատագրին հետ։ Եթէ մեր հրաւերն առնա ուղղեցինք, զանց ընելով կարողագոյններ, պատճառն ա՛յն էր որ ներկայիս մէջ չէր գտնուեր անոնցմէ մէկը որ ամենակարողութիւն վերագրէր Կիսադարուն. ապա թէ ոչ, մօտ և հեռու կը գտնուէին հմտագոյններ որոնց կրնայինք մեր հրաւերն ուղղել, և որոնք թերեւս ձառակի Օգնական—Խմբագրին դժբախտութեան չիմատնուէին։ Ներքնապէս, գուցէ ուրիշ Ոսկեղարեանց քով ալ տիրող համողումն համաման էր Գուրգենականին, բայց որովհետեւ զայդ հաւաստեալ չէինք գիտեր, բնականաբար պիտի խորշէինք անոնց ուղղել մեր հրաւերը, մի գուցէ սխալ դուռ զարնելու անպատեհութիւնը գործէինք։ Բայց եթէ կարելի է հիմա բան մը մակարել Կիսադարեանց ընդհանուր լուծիւնէն, այն է թէ Գուրգէն էֆ. կարծէկիցներ չունի եղեր անոնց մէջ. վասն զի եթէ այնպիսիք գոյութիւն ունենային, անշուշտ ի տես դողգոջման առատախօս և սակաւագործ վարպետին, իրենք պիտի փութային, ի հանդիստ հրաւիրելով զնա, ստանձնել կատարումն առաջարկեալ թարգմանչական գործին, և եթէ չէին ուզեր այդպէս ընել, գոնէ հարկ եղած օգնութեան ձեռքը պիտի կարկառէին անոր՝ յայտնի թէ գաղտնի։ Մենք իսպառ չենք հաւատար թէ Գուրգէն էֆ. տքնած տուայտած չըլլայ Բօնջօնեան բնագրին թարգմանութիւնն յաջողցնելու. փորձեր ճիգեր ըրած է անշուշտ. թիրեւս հղօրագունից նպաստին ու խորհուրդին ալ դիմած։ Խիստ արիական և

հետաքրքրական գործ մը կատարած կ'ըլլար ինք՝ հրատարակութեան տալով իր փորձերուն պատճէնները. զի, վերջապէս, յաջող թէ անյաջող, անոնք Հիւրմիւզայադթ վարպետի մը գրչի փորձերն էին, որք իրենց չահեկանութիւնը կրնային ունենալ. ի վեր հանելով քննասիրող մտաց առջև՝ թէ Ֆենելոնեան պատառիկի մը թարգմանչին յաջողութիւնն ո՛րչափ եղած էր ի թարգմանութեան նորաձեւն Բօնջօնի։ Որովհետեւ այսպէս չըրաւ, խիստ բնական է մտածել թէ արդեօք շա՛տ անհաւասար էր իր բարձրագոյ խիղախմանց՝ հին համալ մ'աղարտելու չափ՝ արդիւնքը իր ոսկիապատ գրչին զոր փորձեց գաղղիական ծանօթ բնագրին վրայ։ Հաւանական է այս. քանի որ «պաղուկ պղնձեղէններու» հիւանդագին խորշումը կայ իր սրտին մէջ, որ զինք միշտ գերի կ'ընէ կարգ մը սահմանափակ հնաձեւութեանց, և իր մտքին մէկ մասնաւոր հակամիտութեամբ կը մղուի որդեգրել իր հաշուոյն մասնաւոր է՛ն անհրապոյր մասերը հնոյն, դանդաղութիւնները, և ամէ՛ն ինչ որ չէ՝ ճկուն, ի՛նչ որ չէ կորովի, ի՛նչ որ չէ հրապուրիչ։ Դիւրասպառ մթերանոցէ մը զուր կը սպասէ կաղաւորիչ պաշարի՝ դիմադրելու համար անսովոր բնագրաց ոսկիացուցման դժուարութիւններուն, և, խիստ ճիգերէ վերջ, բնական է որ փախուստ տայ անյաղթելիին առջևէն, իր գործունէութիւնը սեղմելով ամփոփելով հնաձեւ դասականութեան մը պատմական—վարպետական պատեանին մէջ՝ թիւր ու թերի հասկցուած Ոսկեղարու մը ոտքերուն տակ ապաստանած։ Մինչդեռ իմաստուն ընտրողականութիւն մը՝ մինչև Ժ. դար երկարաձգուող լեզուական դրախտէն պիտի յաջողէր հաւաքել ծաղիկներ, և յօգուտ վարել զանոնք բերաղան պէսպիսութեամբ, արտայայտելու համար մարդկային քաղաքակրթական միտքն իր յետին նրբացումներով և երաժշտերով։ Ինք anémique դրաբարի մը ջատագով, հակառակ մոլորեալ մ'ըլլալուն, կ'ուզէ ուղղել ընթացքն ուրիշներու՝ որք իր շաւղէն չեն ընթանար։ Կարող եղած չէ երեւակայել անգամ օտա-

րազգի մատենագրութեանց՝ գիտականին ու գրականին ամբառութիւնը, և կը հաւատայ բարեմտօրէն թէ Կուրախոս և Հռակինոս ամենակալ լեզուի մը ապացոյցներն ըլլան: Բայց ահա՝ այն լեզուն է որ կը լքանէ զինք փոքրիկ փորձի մը կամ փորձանքի մը մէջ. կամ աւելի ճիշտ խօսելով, նեղ հայեացքներն որովք ինք կ'ըմբռնէ զայն, չեն ներեր իրեն շարժիլ յընդարձակի:

Երեւակայեցէք Ոսկեդար մը որուն բոլոր երեսները ծանօթ չեն մեզ, ա՛յն պատճառաւ որ ժամանակին գրիչք, կա՛մ ի չգոյ՛ պատեհութեան կա՛մ իրենց գրական ուղղութեան հետեւանօք, կամ մանաւանդ չկամութեամբ գմնեայ դարուց, չկրցին անթերի մատենագրութեամբ ամբողջապէս աւանդել մեզ ինչ որ ունէր լեզուն: Ինչ որ կրցան՝ զայն աւանդեցին Առաջին նախնիք. բաւականաչափ մաս մ'ալ Յաջորդ նախնեաց միջոցաւ մեր ծանօթութեան տակ ինկաւ: Շատ հեռի ենք փարթամ լեզուի մը գանձն անպակաս ժառանգած ըլլալէ: Ժառանգութեան այս պակասն զգալի կ'ըլլայ անոնց որք ծայրալիր պարապում ունեցած են թարգմանութեանց, և միշտ անձնակա՛ն ճարտարանքներով դարձմանած են զայն, — անշուշտ ըստ ոգւոյ հին լեզուին: Եւ մտածե՛լ որ այս Դարուս մէջ, և դեռ երէկ իսկ, մերս Գուրգէն էֆ. գոռ պատգամաձայնութեամբ կը հռչակէր թէ միւս միայն Կիսադարով, առանց կարօտ ըլլալու Յաջորդաց, կրնայ եղեր բացատրել և թարգմանել «առանց անճարակութեան կամ վարանման» ո՛ր և իցէ գաղափար՝ ցո՛ր վայր կարողացած ըլլայ հասնիլ մարդկային միտքն իր բազմադիմի դարդացմանը մէջ:

Ենթոյնական հրաշք մը պիտի ըլլար այդ, — եթէ երբեք յաջողէր: Բայց հրաշքներ կ'արդիւնանային երբեմն անոնց միջոցաւ որք նախասամանեալ էին պատկան գործիքներն ըլլալու Հրաշագործողին, և, հետեւաբար, մասնաւոր կոչում մը կ'ենթադրուէր անոնց անձին վրայ: Գուրգէն էֆ. ունի՞ դայդ կոչումն: Ո՛վ դիտէ: Իր ո՞ր գործերով պիտի գնահատենք զինք: Ամենակերպին Փիլիպպեաններո՞վն արդեօք, յորս մեծ կամքը ու-

նեցաւ յօշատելու Բագրատունին և Հիւրմիւղը, փափկամիտ ձեռքին մէջ բռնած դանակիկ մը. որուն կողմը սուր էր և բերանը գուլ: Ինչ հասկցնել կ'ուզէր այն ճառերով: — «Վենետիկցիք ուղիւ գրաբարը չեն գրեր. Վիեննացիք ուղիւ գրաբարը կը գրեն. ԵՍ ուղիւ գրաբարը կը գրեմ» կ'ըսէր կ'երթար: Մեծարոյ Ուսուցիչը գիտէ՞ արդեօք թէ լեզուականին մէջ Ուղիւղը չէ՛ որ կը տիրապետէ Չեւերուն: Բոլոր Չեւերն ալ ունին իրենց գոյութեան իրաւունքը՝ ըստ նիւթին և ըստ պարագային: Եւ եթէ բազմադան Չեւերը սրբագրելի ըլլային միշտ ըստ Ուղիւղին, գուցէ հարկ ըլլար իր բնական հողագունդը վերածել քանոնի մը ձեւին՝ որպէս զի ուղիւ ըլլայ: Բայց ե՛կ տե՛ս որ ոչ ոք մտիկ կ'ընէ ուղղամիտներուն իւրաքանչիւր ձեւ կը շարունակէ ունենալ իր ինքնուրոյն հանգամանքը, և տասնըչորսէն մէկ պակաս յօդուածներէ ուրիշ բան չի հասկցուիր, բայց միայն սա՛ թէ անոնց հեղինակը կամ կրկնիչը հետեւակն է գրաբարի յետաշրջականաց, որ Ոսկիին գիւտն ըրած ըլլալու փայլամբ հրաժեշտ կը քարոզէ ուրիշ Դարերէ, որք սակայն չստ ինչ պարզեւած են լեզուին՝ իբրեւ լրացուցիչ մասունք Ոսկեոյն:

Բայց մի՞թէ յետաշրջութեան թուականէն առաջ՝ ըսուած էր, օրինակի համար, թէ Սմբատ Պատմագրի գրաբարը բարձր է քան զԵղնիկայն: Կոստովանուած չէ՞ր միշտ ճշմարտութիւնը թէ Ս. Թարգմանչաց լեզուն նախամեծար է: Այն լեզուին հետեւողութեան չափուն և եղանակի՛ն վրայ կը տարբերէին, և միշտ պիտի տարբերին, կարծիքները: Ո՛չ ապաքէն յետաշրջական չափազանցութեանց հետեւանօք լեզուն, իր սահմաններն ընդարձակելու կարօտութեանն հակառակ, նոյն իսկ իր անբաւական հարստութենէն բազում ինչ կը զեղչէ, կարծեցեալ անհարադատութիւններ թօթափելու եռանդով, և զիւրին միահարթ վիճակ մը ստանալու սին յոյսով: Առաւելութիւնն այս մաքրադարդ վիճակին՝ որ ի տեսականն ևեթ կ'արժէ, անպիտան և անարժէք է ի գործնականն: Յաճախ անհարադատ կարծեցեալ գրաբարը աւելի՛ չը-

նորնալից կերպով եւ աւելի՝ ճշգրէն բացատրելու կարող կ'ըլլայ քան ժ.Թ. դարու անուանեալ ոսկի լեզուն, որ երբեմն կ'ըստիպուի դոհանալ կարգ մը բացատրութեամբ որ նախնականութիւն կը բուրհնու եւ ապիկար ու անխմաստ հետեւողութեամբ անհասանելի նախատիպարին, տեսակ մը լեզու կ'երնէ ի հանդէս, յորում հնագուշին ճաշկը չերուի, եւ ուր հնագրեան կոկ եւ կուռ ոճը՝ հում եւ չիւրացուցեալ (non-assimilé) վիճակի մէջ՝ կը պարզէ անկենդան երեւոյթ մը, հետապնդեալ եւ բռնական ճիգով մը պարզութեան՝ որ յուեգոյնն է արուեստականութեանց։ Հոն Անհատականութիւնը լուծ է, Հեղինակութիւնը դադարած, եւ անհրաժեշտ պիտոյից առջեւ իսկ նախաձեռնութիւնը (initiative) կարկամած։ Եւ լեզուն կը նկատուի յանդէպս լոկ իրբեւ մեքենական կազմած մը անշոգի եւ անշունչ, որ տուեալ երկաթի կտորներու յեւմամբն եւ ագուցմամբ պիտի կացուցանէ ամբողջութիւն մը, որ, թէ՛ եւ ըստ Ուղիղ օրինաց արուեստին յոգեալ, սակայն շարժիչ զօրութենէ զուրկ է խալաւ։

Աստի՛ ահա ծնունդը ծանօթ վարդապետութեան թէ՛ Բերականին պարզագոյն օրինաց պահպանումը, եւ աւելի կամ նուազ տրամաբանական դասաւորութիւն մը բառից՝ իտէալն են արուեստին։ Այնպէս որ սակաւապէտն Գուրգէնի եւ այլոց ոմանց սովորութիւն եղած է, երբ գրուածք մը ձեռք անցնեն, նայիլ զննել թէ՛ sket բային իր ընական տեղն է, սեռ ի խնդիր իսկստած է իր դիրքէն, բայլ ետ դրուած է թէ՛ առաջ։ Հոգ չէ թէ հայոյած ըլլան Գեղեցիկն դէմ։ Միթէ ուղիղ գիծերու փիլիսոփայութիւնն իրենց տրուած չէ։

Զարմանալի չէ եթէ այս դասակարգը շատ բան չի հասկնայ գրչի խաղերէ՝ որք սրտի եւ մտքի ցամաքութենէ տարբեր բան մը կը նշանակեն։ Զարմանալի չէ եթէ թըզուկի թիղերով ուղէ չափչփել հասակը գերական հսկայից, առանց անդրադառնալու թէ անոնք չափելի են հսկայից կանգնով։ Յաւիտեան պիտի դայրանան անոնք թէ ինչ

չո՛ւ իրենց գիտցածին չափ անձուկ էութիւն մը չէ լեզուն։ Եւ Ուկրանսոսին ափանց վրայ երեւուն՝ միշտ պիտի բողբոջեն անոր անհունութեան դէմ՝ մասուցի բանիի ատենինն առջեւ։—Բայց իրաւունք ունին։

Համառօտենք. Բօնշօնի թարգմանութեան վրայ պիտի խօսէինք, եւ հեռուն դացինք։ Ինչպէս ըսինք յօդուածիս սկիզբը, մեր ծանօթ առաջարկութիւնը այլ եւս պիտի չկրկնենք։ Վարպետին լուծեան պատճառը բաւական հասկցուած է։ Եթէ իրմէն սպասուած գործը կատարելու կարող ըլլար ինք, չիք տարակոյս թէ անմիջապէս երեւան կուգար, փոխանակ կիրճի մը մէջ պաշարուած հեւալու։ Գիտենք թէ ինչ փութով սովոր է հրապարակ գալ՝ նոյն իսկ անկարեւոր խնդրոց առթիւ, փողելու համար, զոր օրինակ, թէ «Գիշերոյ» ուզիլ է, Գիշերոյ՝ սխալ»։ Բանի որ տեղեակ ենք իր սոյն հոգեբանական վիճակին, բացարձակ անկարողութենէ տարբեր պատճառ մը չենք կարող վերագրել իր լուծութեան։—Բայց դո՛նէ աղնուական անձնադոհութիւն մը ի սէր կ'իսադարուն, պէտք էր թելադիր ըլլար իրեն՝ համարձակ յայտարարութեամբ մը անջատելու իր Անձին գաղափարը Ոսկեդարու գաղափարէն, եւ հեղիկ համակերպութեամբ մը մեկուսանալով ատուանէն, իրեն առաջարկուած պաշտօնը ուրիշներու յանձնէր, յակա՛նէ յանուանէ կոչելով ի գործ իր ծանօթներուն մէջէն հօրագոյն Մեսրոպեան ճարտարները։ Հայկաբանից կաճառին յառաջագահութեան տոկիւր չթոյլատրեց իրեն սոյն խոնարհական անձնուրացութիւնը եւ այժմ հարկ կ'ըլլայ մեզ՝ իր հրաժարականը պահանջել ցաւ ի սիրտ։

ՏԻԴՐԱՆ ԵՒ ՔԷՆՃԵԱՆ

ՏԻՊՈՒՐ ԼԱՍՏԵՐԳՈՒԹԵՒՆ



ՕՐ. Ե. Է.ԻՆ

... Ու ձայները հետզհետէ խօլագին, կը կրկնուին, կը նուաղին ամեն ժամ. Ձայնը յուսկին, ձայնը սիրոյս նուաղին, Ձայնը երգող կարօցներու սիրակոն։

Հեռուն ըլլալ, մութին մէջը միսմինակ,
Բզգայութեան լրկումներովը անեղ,
Հեռուներուն լոյսերովը բիւրեւանգ,
Միմակ ըլլալ... պաշտումներէն խելայեղ:

Շուրջըս քաղծոս դաւանակում մը կայ անհուն,
Տրսմութեանը հեւեւովը կազմուած,
Բոլոր իրերն հոգիիս պէս, անդադրում,
Կը հեծկլսան արեւուն տակ լսնամած:

Մրսիս մեջէն յանկարծ ձայնդ ալ լսեցի,
Անշայտից մախուր շեւտով մ'օղայիցի,
Ու մութին մէջ բոլոր ձայներն այդ կոծի,
Խօյ, գալարող սիրերգութիւնս երգեցին:

Ծոյլ ցնորք մը՝ սա երազըս ոսկեծիր...
Միշտ փոքր ըլլալ, ամեն վարկեան, ամեն օր,
Քու շունչիդ մէջ՝ իսեացած, սիրալիր,
Անեացման գինովութեամբն անսովոր:

ՄԱՌԻՍ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԵՐԵՆ

ՎՈՍՓՈՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Քիթիճ-ՊոլիճՈՒ, 27 Հոկտեմբեր
Երկուշաբթի

Տերեւաթափը սկսած է արդէն, անձրեւով
ցուրտով խառն տերեւաթափի մը որ այնքան
տխուր կը դարձնէ աշնան օրհասը: Գարնան
ու տմրան անձրեւները, այս տարի առատ ու
փոթորկալից, կեանքոտ բան մը ունէին կար-
ծեալ իրենց մէջ, մինչ հոկտեմբերի վերջի օ-
րերուն բարակ անձրեւը, թեթեւ ու ընդհատ,
հիւանդաբոյր տղաւորութիւն մը կը թողու-
առաջինը՝ երիտասարդութիւնն է, որ կուրծք
կու տայ կեանքի փոթորիկներուն. հիմակ-
ուանը, արքուն հասակի, ծերութեան սեռին
վրայ գտնուող տարիքին հիւծումն է, որ
տոկալ չի գիտեր: Բնութեան եղանակները՝
իրենց լայն դիմերուն մէջ՝ ի՞նչ կենդանի
կերպով կը պատկերայնեն մարդը:

Կը յիշեմ որ ատեն մը բաւական բաներ
գրուեցան թերթերուն մէջ, երբեմն հեզնոտ

տողեր իսկ, մեր պատանիները զգուշացնե-
լու համար որ չի ներշնչուին Միլվուալի ու-
տանաւորէն և հիւանդաբոյր ոտանաւորներ
գրել չի փորձեն, որ կանխահաս մեղամաղ-
ձութեամբ մը պիտի պատէր զիրենք: Ի՞նչ
ձեւի տակ ալ ուղղուած ըլլային անոնք, ա-
ռողջ մտածման արդիւնք յորդորներ էին,
բարեբար ներգործութիւն մը առաջ բերելու
սահմանուած: Կը խորհիմ թէ արդեօք նոյն
սխալանքին մէջ կիյնամ ես ալ, տերեւաթա-
փին առջև կանգ առնելով այս պահուս. բայց
այդ գրուածքները նորհաս սերունդին հա-
մար էին, մինչ այս տողերը գրողը հեռու
կը գտնուի արդէն երիտասարդութեան տա-
րիքէն:

Անկեղծապէս խօսելու համար, քանի որ
առիթը ներկայացաւ, այդ «նորհաս սերունդ»
կոչուածը, սկսնակ գրողները մասնաւորապէս,
քիչ մը փափուկ ու անելանելի կացութեան
մէջ կը գտնեն ինքզինքնին, երբ իրենց գը-
րական կամ բանաստեղծական նախափորձը
ընելու համար առաջ կը նետուին. ամէն
կողմէ ուղղութիւն մը ցոյց կը տրուի իրենց.
— «Տխուր բաներ մի՛ գրէք» կ'ըսեն անոնց,
և երբ զուարթին յարիւ պիտի փորձեն՝ ա-
հա զուարթ գրուածքներու զուլիս—գործոց-
ներ արտադրող մը, Բրիդանթէմ, կը դա-
տափեալ իրենց աչքին առջև. ո՞ր ճամ-
բուն հետեւի: Իրենց սխալը հոն է որ, ա-
ռաջին վայրկեանէն մէջ մէկ Դուրեան երեւա-
կայած էին ինքզինքնին, բռնազրօսիկ հի-
ւանդներ, բռնազրօսիկ մեղամաղձոտներ
դառնալով. Իւսկիւտարցի վառամեղ բանաս-
տեղծը սիրուեցաւ, հաւնուեցաւ, որովհետեւ
իր մաշած սրտին ճշմարիտ հառաչանքները,
իր ցաւատանջ հոգիին յոյզերը միայն յանձնեց
թուղթին: Դուրեան մը չի պատրաստուիր,
կը ծնի: Այս գաղափարը պէտք էր արմա-
տացնել նորերու մտքին մէջ, որոնք առողջ
մարմնով, առանց որեւէ թաղծութիւն ու-
նենալու, օրհասական մը երգել կը փորձեն:
Առանց այս արհեստականութեան, ո՞վ կ'ըսէ
թէ տխուր երգերը բանաստեղծութեան գե-
ղեցկագոյն ու գրաւիչ մասը չեն կազմեր:

Ուշադիր հետեւող մը մեր պարբերականս

ներու ոտանաւորի ճիւղին, դիտած եմ որ գրեթէ անձանթ, առաջին անգամ հրապարակ ելլող ստորագրութիւններ, ծածկանուններ կամ սկզբնատառեր կրող բանաստեղծութեանց շարքին մէջ, որոնք կը հրատարակուին, միշտ սիրուն մտածում մը, աղուոր դարձուածքներ, յաջող յանգեր կը գտնուին, թէև կատարեալ չլլան անոնք. խմբագրութիւնները անշուշտ տասնին—քսանին մէկն է որ հրապարակ կը հանեն այդ նոր գրուածքներէն, լաւագոյն նկատուածները: Եւ աղէկ կ'ընեն. ինչպէս որ սկսնականները շատ պիտի չփայտնէր անխառն գնահատում մը, այնպէս ալ պիտի վնասեցնէր զանոնք՝ բացարձակ մերժում մը: Պէտք է համակրանքով վերաբերուիլ անոնց հետ, թէև առանց չափը գովեստի. անոնց մէջ կրնան գտնուիլ նորածիլ տաղանդներ որոնք պիտի խամբէին՝ հեղինակներու մերժումին առջև: Դեռ վերջերս, Մասիսի մէջ աչքիս զարկաւ պզտիկ ոտանաւոր մը, Տարսնէն զրկուած ու թերթին մէկ անկիւնը զետեղուած, Սիւրս-Բուրվառ, որ շատ ներդաշնակ էր.

Սեղանին քովիկ, կախուած բուրվառին
կըրակին մէջը, սաստիկ, արծարծուն,
նունկի հատիկներ ամբողջ կը վառին,
Միայն սև մոխիր մը թողլով անգոյն:

Ու ոլոր-մոլոր քուլաներ ծուխին
Բոյրով մը անուշ ու ողեսպարար,
Բուրվառէն վեր վեր մեղմիւ կը ծխին
Պարուրելով վեհ խորանին կամար:

Ով որ ալ է այս տողերը գրողը, երիտասարդ մը անշուշտ, բանաստեղծի խառնուածք ունի և թո՛ղ շարունակէ գրել: Վարդգէսին նման յայտնութիւն մը պիտի ըլլայ ինքն ալ: Իսկ Վ.—ը. ա՛ն աւելի առատ արտադրող մըն է, ու յաջողած մը արդէն, և առանց զինքը ճանչնալու կամ ո՛վ ըլլալը գիտնալու կը գուշակեմ սիրամոլ հոգի մը, մութին առանձնութեան մէջ տառապող սիրտ մը. իր գրուածքներուն մէջ տրտմութիւն մը, դառնութիւն մը կան որոնք կեղծ չեն կրնար ըլլալ. ճշմարիտ ցաւը, սիրոյ մէջ մանաւանդ, ինքզինքը չի կրնար պարտկել: Այդ երիտասարդը—վասն զի կ'ենթադրեմ՝ ի՞նչ երիտա-

սարդ մըն է ինքն ալ, նոր գրիչ մը—չատ գեղեցիկ օրինակ մը տուաւ՝ թարգմանելով Լամարդինին Լեալը, հակառակ գրաբար ու աշխարհաբար քանի մը թարգմանութիւններ ունենալուն, և երկու ուրիշ ֆրանսերէն քերթութեան. նորերուն համար լաւ մարզարան մըն է թարգմանութիւնը. անով, իրենց ճաշակը կը կրթուի ու գրիչը կը յղկուի. յոգնութեան, տշխատութեան կը վարժուին՝ լաւ բան մը արտադրելու համար, մինչ այնքան դիւրին կ'երեւայ չորս յանգ ետեւէ ետեւ բերել ու չորս տուն տակէ տակ շարել, ոտանաւոր մը կազմելու տենչով: Մասիսին Վ.—ը հեղինակութիւնը ու թարգմանութիւնը մէկտեղ կը մշակէ բանաստեղծութեան մէջ. և ասոր համար շնորհաւորելի է: Թո՛ղ հետեւին իրեն:

Ուսկի՛ց ո՛ւր տարաւ զիս տերեւաթափը,
Որովհետեւ, այս տխուր օգերէն ի՛նչ աւելի
յարմար առիթ՝ խօսելու բանաստեղծութեան
վրայ. սեղանիս վրայ դիզուած թերթերը՝
իրենց թարմութիւնը կորոնցուցած, ճմրթկած
էջերով, շատերուն մէջ չորցած ծաղիկ մը
մնացած, իրենք ալ աչնան, մանրանկար մը
կը ցուցադրեն աչքիս. այդ էջերուն ամէն
մէկը, առոյգ մտքով՝ աշխոյժ ձեռքով գրուած,
շարուած, տպուած, գարնան թարմութիւնը
ունէին երբ հրապարակ կը հանուէին,
ու հիմայ՝ լքուած թուղթերու դէպ
մը կը կազմեն, թափթփած սա տերեւներուն
պէս: Որքա՛ն սիրամաշուքով երեւան բերուած
են անոնք սակայն, գրակէն պզտիկ
փառասիրութիւններ, երիտասարդական երազներ
գգուելով:

ՄԵՆԱՍԷՐ

ԱՆՈՐ ԺՈՐՏԸ



ԵՂԲՈՐՈՐԴՈՅՍ՝ ԳԵՂԱՄԻՆ ՅԵՇԱՏԱԿԻՆ

Հազիւ բացուած աչեք յոյսից,
Հազիւ տուած պատրանք սին,
Մեր տան երգեմ գերդ շող անցաւ,
Մեզի բոլորով կսկիծ եւ ցաւ:

Վառ այսն ունեք փթիք ծաղկին,
հօսեք չունեք, այլ ժպիտ անգին,
Լացր երգ եր, նայուածք՝ յոյս,
Մայրն արդ մնօք ողբ սրայոյդ:

Ակն ունեիք բոթովանքին,
Ականջ դրեք մահուան երգին.
Ճակասագիրն մերք ունի իսալ,
Այսպէս փոքրեք տանի մասալ:

Անոր կեանքն եղաւ ժպիտ նոր,
Ժպիտ մը իսուր՝ մահն ալ անոր,
Թռաւ երկիքն սուրբ հրեօտակ,
Ժպիտք մնաց իբր յիշատակ:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴ.

22 Օգոստ. 1903

ՄՈՌԻՍ ԲՈՒՆԱ

(ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ)

«Բնութիւնը զայն օժտած էր արտակարգ
և սաղայեղական գեղեցկութեամբ մը: Իր
թուլի դէմքը, իր սև ցցուած և միշտ ան-
յարդար մազերը, իր աչքերուն տենդոտ
փայլը, իր ձայնին սուր հնչիւնը, այն սոս-
կալի կորովը զոր կը դնէր անոր մէջ, տե-
սակ մը զարհուրանք կը գրգռէին»։— Զինքը
ձանջցողներէն մէկը կը գրէ այսպէս, և բա-
րոյապէս, Պոսլէռի հետ կը բաղդատէ զայն: Այս
բաղդատութեան տեղի կը արուի ո՛չ
միայն անշուշտ անով որ Ռոլինա, իր գրական
կեանքին սկզբնաւորութեան մէջ, Պոսլէռի
եղական զիրքէն դիւրեւած և ներշնչուած է,
անոր՝ «ցնորականն ու զարհուրելին» հետա-
պնդող արուեստագիտական կերպարանիչ հը-
ղօր կարողութիւններէն, այլ նաև մանաւանդ
անով որ Ռոլինա իր ներքին յուզումնական
խանութեամբ իսկ արդէն «ցնորականն» և
«զարհուրելին» միջին առաքեալը կը հան-
դիսանար: Մարդ իր նախասիրութիւններուն,

իր մտքին շօշափած առարկաներուն մէջ, որ-
քան ալ անոնք դրանք թելադրուած ըլլան,
ունի դարձեալ անձնական չգիտես ինչ մը որ
իր իսկ անձին բարոյական յորինուածքէն կը
մեկնի և ըսել կը ժողի թէ այդ «նախասի-
րութիւններէն» տարբեր «նախասիրութիւն-
ներ» չարտի կրնային գոյութիւն ունենալ իր
մէջ: Բայց Ռոլինայի դէմքը և անոր բարո-
յա-զգացական արտայայտութիւնները իր յու-
զումնական աշխարհին մէջ, կը բաւեն ար-
դէն ցոյց տալու թէ ինքը ո՛րքան «անկեղծ
կերպով» հիւանդ է, թէ իր հոգեկան հի-
ւանդագին շարժումները ո՛րքան ներշնչու-
եալ իր անձին: Անտարակոյս, Ռոլինա՝ Պոս-
լէռի ո՛չ առարկայական զննողութեան վեր-
լուծամով կարողութիւնը, ո՛չ ալ անոր մը-
տաւորական և արուեստագիտական կորովը
ունի. բայց իրենց ճաշակները ո՛րքան հա-
սարակաց են, իրենց շօշափած առարկաները
ո՛րքան նման իրարու.— երբ երկու հոգիներ-
ու մէջ զգացումներու և ճաշակներու նոյ-
նութիւն կայ, առարկաներու՝ նիւթերու ալ
նոյնութիւն կայ տեսողութեան անկիւնին
տակ. կերպով մը այդ առարկաներուն ամ-
բողջութիւնը այբեմարանը կը կազմեն այդ
տիրող զգացումներուն և զիրար կը հետե-
ցնեն, զիրար կը ծնին:

Շաթօռու (Ֆրանսայի Լնտուի նահանգին
մէջ) իր մանկութեան վայրն է ուրկէ կա-
նուխէն կը մեկնի Բարիզ, Գառթիէ Լաթէնի
գրական գարեջրատուններուն մէջ երեւնալու
և հոն իր հրաշալի՝ մասնաւորապէս համբաւ-
ուած ձայնով արտասանելու համար իր Զլախս-
Նեքեմ(*) ամէնէն եղերական հատուածները: Իր
համբաւին ծագումը մասնաւոր պատմութիւն
մը ունի որ բաւական կը յատկանշէ իր մի-
ջավայրը և այն գնահատումի կերպը՝ դա-

(*) Les Nevroses, Maurice Rollinat.—
հեղինակին մէկ լուսանկարով միասին՝ Ֆ.
Տէմուլէնի կողմէ շինուած, Բարիզ, 1883:
Բանաստեղծութիւններու երկրորդ հաւաքա-
ծոյ մըն ալ հրատարակած է Ռոլինա, 1891ին,
Անգուլըր, L'Abîme, որ առաջինին հետ մի-
եւնոյն հոգեկան հանգամանքները ունի:

սուսները որոնք գրական խառնուածքի մը առարկայական արժէքը չէ՝ որ կը հաստատեն յաճախ Կրնաք գուշակել թէ կրնենք են որ ամէնէն աւելի դիւրաւ գիտեն սոսկալ և իրենց դիւրին զարհուրանքի աստիճանին համեմատ արժէքներ որոշել։ Այսպէս, Սառա Պէռնար օր մը բազդը կ'ունենար մտիկ ընելու Զլախսմեռու հեղինակին մէկ արտասանած կտորը՝ իսկոյն խանգաւառուած՝ այգիկներ ծնրադրեց բանաստեղծին առջև՝ անոր նուիրելով իր ձեռքը ունեցած վարդերը։ Սառա Պէռնարի յուզումը ա'յնքան զօրաւոր եղաւ որ յանձնարարեց Ռօլինայի յիշատակութեան համար շեշտուած տողեր. Այսպէս Ուոլֆ քրոսնիկագրին։ Այսպէս Ուոլֆ ամբողջ ներբողական յօդուած մը նուիրեց Ռօլինայի անունին շուրջ, Ֆիկառօի մէջ, և հետեւեալ օրը Զլախսմեռու հեղինակը օրուան ամէնէն ծանօթ գրողներէն մէկն էր։ Սառա Պէռնար Ռօլինայի առտուան բանալին եղաւ, որ բիւրաւոր մոայլամած ցնորակոծ իրիկուններու անբուժելի տխրութեան դռները պիտի բանար քիչ ետքը համարձակ կերպով։ Անշուշտ կրնանք ու մանուկները աւելի գիտեն զարհուրիչ քան հասունամիտ էրիկ մարդիկ։ առաջիններուն ջղային դրութիւնը չա'տ աւելի դիւրագրգիռ է, վասն զի զգայութիւնները առաւելալիւ են դատողութիւններուն անհետ բազդատմամբ, և վերջիններուն մէջ հասուն խի'ստ դատողութիւնը, առարկայապէս քննադատողի աններող կարողութիւնը չէ'տ կը տիրէ։ Ասոր համեմատ, ժողովրդական արկածալից թերթօնները, վիպական միասարսուռ և արուեստակութեամբ վնասուած «անգութ բառերով» ճոխ վէպերը որոնք կոչուած են բան մը ծանօթացնելէ աւելի՝ զարհուրել տալ, ամէնէն աւելի գիտեն հետաքրքրել միայն կրնանք և մանուկները։ Ճշմարիտ յուզումը որ իրեն հետ դուրս կը բերէ յատկանական արժանիքը մեր սիրտը զբաղեցնելու և մեր միտքը աւելի կամ նուազ ճնշելու իր դրութեան ձայնին տակ, այն յուզումն է՝ որ ո'չ թէ մեր ներքին դորձաբաններուն ալքերէն կը հանենք մասնաւոր ծուլութեամբ մը կամ եսասիրութեամբ մը, այլ բնութեան դէմ յանդիման հայեցողութե-

նէն, բնական օրէնքներու և ճշմարտապէս մարդկային հոգիի մը միջև կատարուած իրական բաղխումէն, բոլոր այն մասնաւոր կերպով ընտրուած երեւոյթներէն որոնք արտաքին աշխարհին ամենաբարձր գեղեցկագոյն արձագանգները կ'ըլլան մարդկային եսին մէջ։ Ռօլինա չի' գիտեր, ո'չ կարողութիւն ո'չ ալ ժամանակ ունի գիտելու, *anxiomane* մըն է Մանեսնի բառով, իրերը իր ցնորակոծ հոգին միայն կ'արտայայտեն և բնութիւնը գործ մը չունի իրեն հետ. պատասխան մը չունի, վասն զի իր ներկայութեան խորհուրդին վայել ո'չ մէկ հարցում կ'ուղղուի իրեն։ Ռօլինա ա'յսպէս կը գտնէ իր սենեակը.

«Սենեակս է նման ճիշտ իմ հոգիին։—Վարագոյրներ ծանր ու չա'տ հնամեայ—կըծկուին խորունկ անկողնին վրայ.—Եւ միջատներ, հոն, երկար, ցնորական—առատաղին վրայ պարեն ու աղան։—Երբ հնչէ պատէն կախ իմ ժամացոյց —աղմուկ մ'իր ծոցէն հանէ հոգեցունց.—Ճեմելով ճօճին թրթռումներն ամէն —Եւ կը տարածուին ա'յնքան տարօրէն։—Կարասի, նկար, ծաղիկ, գիրքերն ալ—Ամէն բան դժուար և թոյն կը բուրէ.—Աւ չըզարչի պէս՝ վախն որ զիս սիրէ—Կը ծածկէ իրմով սենեակն այս մոայլ»։

Աւելի յառաջանալով Ռօլինայի հոգեկան նկարագրին վերլուծութեան մէջ, կը գտնենք զինքը սանձարձակ տարփամով մը (*érotomane*) մասնաւորապէս «Luxures» խորագրուած հատուածներու շարքին մէջ. *paranophobie*՝ կամ աւելի յաջող բառով *anxiomanie*՝ տաղնապամութեան նշաւակ մը, օրինակի համար *Le maniaque* և քիչ մը վեր մեր յիշած ոտանաւորին մէջ չի'շխու համար ուրիշ ոտանաւորներ։ Անշուշտ կարելի չէ բոլոր այս դատումները, բոլոր այս անգութ որակումները վերջին լրջութեամբ մը վաւերացնել Ռօլինայի մէջ հսկող բարոյա—բնական մարդուն համար, այլ այն արուեստագէտին համար որ Արուեստին պատրուակով կ'ուղէ հետեւեցնել տալ զանոնք։ Գիտական վերջին մէկ հաստատում մըն է թէ, ով որ հոգեկան շեղումներ կը նմանա-

կերպէ (mimer) իր մէջ, Արուեստի անունով օրինակի համար, արդէն իսկ այդ շեղումներուն կանխագիծերը, զանոնք կազմող մասնատարրը ունի իր մէջ: Եւ Արուեստը, ինչ որ ալ ըլլայ, մարդուն կեանքն է դարձեալ, քնիւր հիւթը անոր հոգիին, անոր բարոյական ուժերը միաւորող և հետեւապէս այն բարձր կեանքը զոր կը յաւակնի արդէն քլալ:

Վերջին տարիներուն մէջ, ինչպէս գրեցին թերթերը, Ռօլինա, իր մտերիմ բժիշկին խորհուրդով, թողած էր Բարիդի կնճռոտ մաշեցուցիչ մթնոլորտը և քաշուած Գոէօզի փոքրիկ մէկ գիւղաքաղաքին՝ Փոէսըլինի մէջ, իր հետ տանելով իր ամէնէն սիրած անբաժանելի բաները, լուսանկարներ, նկարներ, իր նախասիրած հեղինակներէն մէկ քանի գիրքեր: Դաշնակ մը, բոլոր ասոնցմէ վեր, մասնաւոր անկիւն մը կը գրաւէր իր խրճիթին մէջ: Ռօլինա բաւական յաջող դաշնակահար մըն է միանգամայն, երաժշտական արուեստին մասնաւոր նրբութիւններէն աւելի իր ներշնչումներուն պարզ մղումին հետամուտ: Իր ոտանաւորներէն մէկ մասը դաշնակի վրայ կը փորձէր, ինքն իսկ յորինելով եղանակները: Կրնաք գուշակել թէ երջանիկ էր իր խրճիթին մէջ. դաշտերու պայծառ երկինքով խայտացող կանանչազարդ բայտատաններու մարդը կար իր մէջ արուեստական գրական բանդագուշանքներով գրգռող մարդուն հետ միասին, ճակատ առ ճակատ:—Իր բժիշկին անսալ, Փոէսըլինի մաքուր մթնոլորտը ծծելու հաւանիլ թողնուի իր ետին Բարիդի գրական զգայամեղկ սանօնները ուր բռնի կը քաշէին զինքը. անտառներուն ծառերուն հովանին և արեւուն ջերմութիւնը՝ միասին եղանակաւորուած՝ սիրելի առուակին յատակութեան մէջ թօթափել իր հոգիին գիւշերներուն մռայլը եւ նոյն իսկ... կարմրախայտ որսալ հոն իր «թիկըրթօ» կատուին եւ իր «բիսթօլէ» շունին—այսպէս կը կոչէր զանոնք—ընկերակցութեամբ, բաւական ցոյց չէր տար թէ իր մէջ կար յաւէտ առողջ կամեցողութիւններու բնական մարդը որ սակայն ա՛յնքան ուշ կը պահպանուէր, ջիւղերու ա՛յնքան երկար խոնջէնքէ մը վերջ: Ասիկա կը նմանէր սովալլուկի մը վերջին ան-

ձեռնմխելի անգութ հաճոյքին երբ, խորունկ քաղցի մը մահացու սուայտանքէն վերջ, յանկարծ ինքզինքը կը գտնէ ճոխ եւ ամէնէն անդարար գեղեցիկ համադամներով բեռնաւորուած սեղանի մը առջեւ: Փոէսըլինի նոյն այդ սեղանը եղաւ և անոր հաճոյքը՝ կծու հեգնական: Իր սիրելի կնոջ մահը ցընցեց իր ուղեղը, և ատիկա պատրուակ մը եղաւ արեւոտ մաքուր Փոէսըլինի մթին՝ բանդագուշանքներով լեցուն Սալբէթոիէսի մը վերածելու համար:

Իր հիւանդութիւնը յանկարծական չեղաւ, այլ հանդարտ դանդաղ կերպով ներակազմուեցաւ իր մէջ, Արուեստին սեղանին առջեւ: Առաջին ժամերուն, երբ տխրութիւնը թարմ էր և աւելի ճոխ սարսուռ կերպարանաւորուած, Ջլախսկեր երեւան ելան: Այդ ժամերուն մէջ գրուած ոտանաւոր մըն է հետեւեալը, Ballade des Nuages, որ կը յայտնէ բաւական իր անկապաշտ հոգիին, իր անբուժելի անյուսութեան տիրական դրոշմը: «Մեռած լիճերու պէս, մերթ կայուն և տափակ,—Անշարժ պատաններով տարածուին, կամ սողան—կապոյտին մէջ, խղճի բոց խայթի մը նման:—Անարգ գաղաններու ղերթ փախչող մէկ լոհմակ—Մերթ կ'արշաւեն դէպ ի քաղաքներն ու անտառ:—Եւ ծառերն հմայուած ու մարմերու մօտ,—Տանիքն արձակելով հառաչքն իր գոլորշոտ—Որ միանայ անոնց հիացմամբ հեռամար—Մէկիկ մէկիկ դիտեն որ կ'անցնին և ծնգին—Ամպերն որ կը նիչեն խորհուրդը մեր կեանքին»:—«Առաստաղներ սիրուած գուժարեր ազուաւէն,—Վիրաւորեն մարդուն և թռչունին աչքեր.—Բայց արծիւներն հպարտ, երկար թռիչք մ'առնեն—Դէպ ամպերը, դէպի այդ նրբին կղզեակներ—Սաղաղիկ բարձրութեանց կապոյտ լանջքին մէջ կախ:—Յամաքահովերուն մոնշիւններն երբ լսեն—Ետ կը դառնան ամպերը, վարուած զեփուհէն—Որ կը թողու զանոնք թափառիլ աջ ու ձախ.—Եւ այդն ու վերջալոյս ձեւ կու տան վերստին—Ամպերուն որ նիչեն խորհուրդը մեր կեանքին»:—«Որենց դրոշն, իրենց վարդն ու կապոյտն ու ոսկին—Սփինքաներ կը կերպեն, բրածո»

ներու գէղ, — Մուրաժ նաւակներ, մոգող զարդեր նրբին, — Եւ մեծ ոչխարներ սե ու ճերմակ, վէս կամ հեղ — Որ, ճարակելով, հեշտ ճամբերէ թափառին — Խուլ մրկով մ'ուռած, որ հոն պահուըտիլ դայ, — Կը քալին յամրաբար, կամ ծնրադրեն լռին — Երբե'ք չմագլցուած, խի'ստ լերան մը վրայ : — Բայց յանկարծ կ'անցնի հովն և ցրուել տայ կրկին — Ամպերն որ կը նիշեն խորհուրդը մեր կեանքին » : — « Ո'վ մահ, Աստուածութիւն յաւիտենեան նիրհին, — Լաւ դիտես, դո'ւն ուրով սիրտս հիւծի լալագին — Եւ որուն կողմն անդուլ զիս հրաւիրէ չիրմին — Գիտե'ս թէ անսարսուռ չդիտեցի բնական — Ամպերն որ կը նիշեն խորհուրդը մեր կեանքին » :

Ամպը չէ որ կը նկարագրէ Շէլլին պէս, այլ իր հիւանդագին մթութիւնը. ո'չ Շէլլին ամպին վերլուծական նուրբ զօրութիւնը կայ հոս, ո'չ ալ անոր գեղեցկութիւնը շարժումներու ահաւոր գունապերճ բազմազանութեան մէջ որ «ամբողջ կեանքին» խորհուրդին տըպաւորութիւնը կուտայ :

* *

Երբ պէտք եղաւ դառնալ առողջութեան, Ռօլինա տեսաւ որ իր հիւանդագին ցնորքները, Արուեստին անուշտով, անբուժելի հետք մը դրոշմած էին իր մէջ : Եւ յետոյ, ո'վ պիտի տարակուսէր թէ ան չսիրեց իր ցնորքները, թէ բուն կերպով չխայտաց այն յաջողութիւններու ժամուն ուր կը տեսնէր թէ կրցած էր առարկայացնել իր գրիչով իր հոգիին տխրութեան զիծերը : Այնպի'սի լաւատեսութեան աստիճան մըն է աս, որ ցոյց կու տայ թէ իրմէ տարբեր իսկութիւն մը չի կրնար արմատ ձգել մարդկային հոգիին մէջ, թէ մարդուն բոլոր յոռետեսութիւնները միջոցներ են միայն անոր դառնալու համար վերստին, և թէ ուրախութեան կամեցողութիւնը աւելի խորունկ է ինքն իր մէջ քան բոլոր մեր անձնական տխրութիւնները :

ԵՂՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԱՆ

ՍՏԱՅԱՆՔ

Լրացուցիչ Դասընթացի տարական Քերականութեան արդի աշխատաւորի դասագիրքը, աշխատասիրուած ՍՄԲՍՏ ԴԱՆԹԵԱՆԵՆԵ, Գ. Տպագր. 1903 : — Վաճառման կեդրոնատեղի՝ Դաւթեան Դործակալութիւն, Կ. Պոլիս, Սիրքէճի, Խորասանճեան Խան :

ԳԱՒԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆՈՒՄԻ ԱՄՈՂԸ (*)

Տիրան կը վախնար եղբորմէն : Չէր ուզեր ամենափոքրիկ թերութիւն մը իսկ ունենալ անոր քով : Խիստ էր Համբիկ. թերեւ ծեծէր զինքը՝ եթէ երբեք կռահէր թէ ապօրինի յարաբերութիւն մը կ'անցնի կը դառնայ. ուստի կը օտարուէր խոհեմութեամբ վարուիլ որ երեսան չելլէ : Դասն տարուան աղայ մը, առողջ, երազուն, ինչպէ'ս դիմանար Դամամի պէս հրապուրոտ աղջկան մը թոյլտուութիւններուն : Գիշերը կ'երազէր յարգանոցը, ցորեկը աչքը կը յառէր խոտանջղջին վրայ ուր կը նստէր միշտ գեղջկուհին, անուշ ակնարկներ ուղղելով դիմացը : Երբեմն եղբայրը գեղանները կ'երթար գանձումի համար ու ինք առանձին կը մնար : Շուտ մը կը վազէր Դամամին որ նշանածին ու Տիրանին բերած կազանդերներով սնած ուռճացած էր ու հեքարիին տակէն հարուստ կուրծքերը կը ցուցադրուէին : Աղջիկը լաւ կը շահագործէր երկուքն ալ, բայց նշանածէն աւելի հակում ունէր դէպ ի Տիրան : Նշանածը, խեղճ գեղացին, երբոր տեսնէր թէ կնիկցուն երեսին կը խնդայ, կ'ոստոտէր ու կը մօտենար անոր, որմէ ճարպիկօրէն սահելով խոյս տալը լաւ գիտեր աղջիկը : Դամամ կ'ըսէր ինքնիրեն « քսան տուննոց գեղ մը պիտի երթամ ու ճգնեմ ամայութեան մէջ, դոնէ սա նշանուած վիճակիս մէջ վայելեմ քիչ մը օրեր : Ախ, Տիրանը առնէր զիս, ինչ կ'ուզէի ուրիշ » : Օր մըն ալ այս դադափարը յայտնեց աղուն որ չիկնեցաւ ու պատասխան մը չկրցաւ տալ : Ինքը չէր կրնար առնել գեղջկուհի մը, մանաւանդ որ իր ամուսնական ճակատագիրը մօրը ու եղբորը ձեռքն էր : Մինչեւ երսուն ինչպէ'ս պիտի կրնար կարգուիլ, քանի որ անդրանիկ եղբայրը երսունին աշխարհք մտած էր : Դամամ չվշտացաւ սակայն անպատասխանի մնալէն : Քաջ գիտէր թէ այս ամուսնութիւնը անկարելիութիւններով լեցուն է :

(*) Բ. Եւ վերջին մաս :

Տարի մը միայն նշանուած մնաց Դամամ: Հարսնիքը պիտի կատարուէր Ս. Յակոբին: Տիրան սեպտեմբերին եղբօրը հետ մեկնած էր քաղաք, յաջորդ գարունին վերադառնալու համար:

Այս մեկնումէն ետքը, աղջիկը ինքզինքը բաւական ժողոված ու միտքը այլեւս նշանածին՝ վրայ չեղբորնացուցած էր: Շաբաթը հոգեւորականը կը քաշէր որպէս զի Սիրուն գար ու մրգեղէններով քիչ մըն ալ գգուանք բերէր:

Դամամ սկսած էր խղճահարիւ. նշանածին խենթի նման զինքը սիրելը տեսնելով՝ իր անհաւատարմութիւնը կը տագնապեցնէր սիրտը: Կը ջանար վանել հեռացնել Տիրանին յիշատակները, սխալած ըլլալը հիմա կըզգար. կ'ուզէր Սիրունին միայն պատկանիլ: Փոքրիկ գեղը՝ որ իրենը պիտի ըլլար՝ դրախտ կ'երեւար աչքին: Անձկութիւնները կը շատնային ու պսակի օրուան կը սպասէր անհամբեր, որպէս զի հեռանար հօրենական տունէն ու զինքը հմայող մթնոլորտին մէջ իյնար: Խոհուն աղջիկ մը եղած էր հիմայ:

Տիրան, անխոհեմ քաղցրին, պատմած էր իր սիրարանութիւնները գեղի աղամարդերուն: Բերնէ բերան զրոյց մըն է կը չըջէր: Երբեմն կուգային խօսքեր կը նետէին, բայց ամէնքն ալ կը խաբուէին որովհետեւ աղջկան խղճահարութիւնը բաւական եղած էր քղանցքը ժողովելու ու անգամ մըն ալ սանձը ուրիշին ձեռքը չտալու: Աղջիկը լսելով Տիրանին անդադտնապահութիւնը, սաստիկ բարկացած, ակռաները կը կրճտէր, բայց կը մտածէր թէ ինքն էր շարժաւորը: Սիրունին ալ ականջը հասաւ: Միամիտ աղան, բարկութենէն կրակ կտրած, միտքը դրաւ լաւ մը ծեծել նշանածը, բայց այնքան կը սիրէր որ քովը դացածին պէս անմիջապէս կը մեղմանար:

Աղջիկը զգաց նշանածին թունաւորումը չարախօսներու բերնով: Իր մերժումները բանբասանքի դուռ բացած էին: Իրիկուն մը, նոյեմբերին, այլեւս տանիքէն վար իջած ու նեքիստունը պապիկին ու մամիկին քովը կը պառկէր: Անկողիններ յարդարեր և իրենը ձգած էր մեծ անպարի մը քովիկը սր գրեթէ

զատուած միւս բաժինէն, առանձին անկիւն մը կը յօրինէր: Մամիկը կըզգար աղջկան կարգադրութիւնը ու ծիծաղելով քթին տակէն կը մըթմըթար «Անուշապուռ ուտել լէ Դամամ»: Նոյն գիշերը յարդանոցը եկած էր Սիրուն, մոմ մըն ալ բերելով հետը: Յարդի դէգերուն ետին պատին մօտ փոքրիկ բաժանում մը կար ուր կը դէնէն ձմեռը լուծքի կազմածքները: Արդէն ցօրեկէն բազմաց մը յարգարուած կը տեսնուէր: Թէև դուրսը ցուրտ քամի մը կը փչէր որ մարդուն ծուծը կ'անցնէր, բայց ներսը տաքուկ էր, ամէն կողմէ յարդով խափանուած: Այդ փոքրիկ բաժանումին մէջ կը մտնուէր նեքիստունէն բացուածքէ մը որ ճիշտ անպարին ետին Դամամին սնարին վրայ էր: Սիրուն երբոր յարդանոցէն մտաւ ու այդ բաժանումին մէջ եկաւ, անկողինին մէջէն լսեց Դամամ ներսի խշրտուքը ու անմիջապէս քովը գնաց: Այս անգամ աղջիկը, առանց նշանածին սպասելու, մօտեցաւ անոր՝ թոյլ ու հրապոյրով առի: Սիրուն ձիկ չհանց. միտքը դրած էր ան օրը սիրտը բանալ, և իմանալ թէ Դամամի յարաբերութիւնը ո՞ր տատիճան առաջ դացած էր Տիրանին հետ: Աղջիկը զգաց, և երբեք չխօսեցաւ, մինակ ատեն ատեն ձեռքերը ուղուն մաղերուն մէջ կը յածէր կանացի դիւթանքովը: Սիրուն դարձեալ չհամարձակեցաւ խօսք բանալ, չար նախանձի վերադրեց ամէն բան:

Ս. Յակոբին, փոքր գեղին քէհեան փառաւոր հարսնիք մը կատարեց: Բառուուն ձիււորով եկան Դամամը տարին ու հոն փոքրիկ մատուռին մէջ պսակեցին պատարագին առջեւ ուրիշ երեք հարսնեւորներու հետ: Քէհեան ամէնուն հաց թափած ու խընջոյք մը սարքած էր:

Տարիներ ետքը Տիրան պահանջի մը համար Քէհեային օտան իջած էր: Երկու օր պառկեցաւ հոն ու փափագեցաւ Դամամը տեսնել, յուսալով հին խնձորներէն քաղել: Ինքը դեռ կարգուած չէր:

Դամամ եկաւ քովը, գիրկը նորածինովը, ու կնոջային չնորհալից ձեւով մը, անտարբերութեամբ. — Մի՛ յուսար, բարեկամ, ու ճամփ

բաղ զնա՝, անտործութեանս մէկ շեղումը մի՛ գիտնար թէ միեւնոյն վիճակին մէջ թողած է զիս: Շնորհակալ եմ անխոհեմութեանդ համար: Ուրիշ տեղ փնտռէ յուսացածդ: Իրիկս քեզի պէս քսան հատ կ'արժէ:

Տիրան ապշահար ու սմբած՝ կարմրեցաւ ու զայրացաւ. սիրտը կը բարախէր: — Ինչո՞ւ այդպէս, հարցուց: — Ձիդ պատրաստուած կը սպասէ ակոռը, կարծեմ դանձեցիր պահանջքդ, ըսաւ իրեւ վերջին խօսք ու — Սիրո՛ւն, կանչեց: Էրկանը:

Սիրուն ակոռէն դուրս ելաւ ձիուն սանձը ձեռքը:

Տիրան, կարծես կայծակնահար, չգիտնալով կոխած տեղը, ցատկեց ձին հեծաւ ու աներեւոյթ եղաւ հասկազարդ արտօրաներու ծփանքներու մէջէն: Կ'երթար առանց ետին նայելու:

ՇԱՀԱՐԻԿ

ԽՐԱՊԵՐԱՆԱՆ ԵՓԵՐ

Ս. Պատրիարք Հայրը երեքշաբթի Մէարիֆի պաշտօնատունը երթալով շնորհաւորեց կրթական նախարար Հաչիմ փաշան՝ Վեդիութեան աստիճանի բարձրանալուն առթիւ:

Կայս զմահատում. — Նախորդ չաբթուն, Մասիսը տպագրուած էր արդէն, երբ ուրբաթ առտուն Պաշտօնականներուն մէջ ծանուցուեցաւ թէ Ա. կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհուած է Վսեմ. Ռօպէտ էֆ. Եազըճեանի՝ Տնօրէն Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան վիճակագրահան վարչութեան, և Ա. կարգի Մէճիտիյէ՝ Վսեմ. Միքայէլ էֆ. Մամիկոնեանի՝ Տնօրէն Սպարապետի Դրան թարգմանութեանց Դիւանին: Հաճութեամբ արձանագրելով Կայս. բարձր գնահատման այս հաւատիքը, մեր շնորհաւորութիւնները կը միացնենք՝ այս առթիւ թէ՛ լրագրութեան միջոցաւ և թէ՛ անհատապէս արտայայտուած խնդակցութիւններուն:

Ս. Էջմիածնէ գրուած է Պատրիարքարան, թէ Ռուսիոյ ներքին գործոց նախարարը հեռագիր մը ուղղելով Ս. Հայրապետին՝ ծանուցեր է թէ «Ն. Վահագնաւորութիւնը բարեհաճած է հրամայել իրեն՝ յայտնել թէ Ս.

Կաթողիկոսին սեպտ. 12 թուակիր խնդրադիրն՝ ինք Կայսրն ընդունած է ի Տարմիշատ, սեպտ. 27ին»:

Աւետաբեր իր «Հայ թերթեր» գլուխին մէջ, — ուր համառօտիւ կը յիշուին չաբթուան մէջ երեւցած ուշագրաւ յօդուածները՝ գնահատական տողերով կամ զիտողութիւններով, — սապէս կը նօթագրէ մեր ներսուն՝ աշխատակից Մեսրոպ վարդապետի (Հարմակ) Մասիսի 41րդ թիւին մէջ հրատարակած «Կրօնք և Բարոյական» յօդուածը զոր ամբողջութեամբ արտատպեց նաեւ Արեւելք.

«Տ. Մեսրոպ Վրդ., Կրօնքի և Բարոյականի վրայ խօսելով, ցոյց կու տայ թէ որչափ բարձրացաւ մարդոց գաղափարը կրօնքի վրայ, նոյնչափ զօրացաւ բարոյականի յարաբերութիւնը կրօնքի հետ, այնպէս որ տիեզերական կրօնքներու մէջ բարոյականը կրօնական կեանքին կեդրոնը համարուեցաւ: Կարելի է այս յօդուածէն սա սխալ գաղափարն առնել թէ բարոյական և կրօնք ստորին և կոչու կարծուած կրօնքներու մէջ իրարմէ հեռու են, իսկ բարձր կրօնքներու մէջ իրարու կը մօտենան: Մեր կարծիքով, ուղիղն այն է թէ ամէն կրօնքի մէջ բարոյական և կրօնք գուզնթաց են և իրարու կ'ազդեն: Ուստի ստորին կրօնքը թերի բարոյական կ'արտադրէ և կատարեալ կրօնքը բարձր բարոյական»:

Եթէ Տ. Մեսրոպ վրդ. ուղէ լուսաբանական քանի մը տողերով, կամ յօդուածով մը պատասխանել Աւետաբերի այս մեկնութեան կամ զիտողութեան, աւելորդ է ըսել թէ Մասիսի էջերը բաց են իր առջև, ինչպէս միշտ:

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Պաղատաւեան գրատունը և մայրաքաղաքիս միւս հայ գրաւածառներուն քով.

	հասոր	դր
Կարմիր մարդոց երգումը	2	10
Ընտանեկուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ, Տնտեսութեան	1	4

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

9.

(LILLIAN MORRIS)

Գրեց ՀԷՆՐԻԻ ՍԷՆԲԻԷ-ԼԻԶ.

Թարգմ. ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ.

Հովիտին բերանը, Ուինթայի Հնդիկները ծուղակ մը լարած էին մեղի դէմ, որուն մէջը իյնալնուս մաղ մնաց: Քիչ մը անդին պարտաւորեցանք կռիւ քնել: Բայց երբոր յանկարծ Լիլիէնի վալիօնին շուրջը կարմիր նետերու իյնալը տեսայ, կատղեցայ և մարդերովս անպատակներուն վրայ խոյացայ, անանկ սաստիկ թափով մը, որ վայրկենապէս ցիրուցան ըրի զանոնք: Անոնցմէ երեք կամ չորս հոգի մեռան: Մէկ հատ մըն ալ գերի բռնեցինք որ տասնըվեց տարու երիտասարդ մըն էր: Երբ քիչ մը սթափեցաւ իր սարսափէն, տեսանք որ արեւմուտքի կողմերը կը մատնանշէր և առատ շարժուածներ կ'ընէր: Կարծեցինք հասկնալ որ մերձակաները ճերմակ մարդերու ներկայութիւնը կ'ուզէր հաւատել մեզի: Թէև անհաւատալի բան մըն էր, բայց իրաւ է եղեր: Այդ դիւրին է երեւակայել գաղթականներուն դարմանքը ու երջանկութիւնը, երբոր հետեւեալ առտուն բարձրաւանդակի մը զառթափէն իջած անոնքս մեր ոտքերուն տակ նշմարեցինք լայն հովիտ մը՝ ուր ոչ միայն վալիօններ, այլ նոր կտրուած ծառի կոճղերով շինուած տուններ կային: Այդ բնակարանները չրջանակ մը կը կաղմէին, որուն կեդրոնը կը բարձրանար առանց պատուհանի խոշոր սայլատուն մը, սլըղտիկ գետակ մը կ'երկարէր հովիտին մէջ. անոր մօտ կը ձարակէին ջորիի ջոկատներ որոնց վրայ կը հսկէին ձիաւոր մարդիկներ:

Այդ տեղը, իմ ցեղէս մարդերու ներկայութիւնը, զարմանքով պատեց զիս և այդ զարմանքս շուտով վախու փոխուեցաւ, երբ խորհեցայ որ ատոնք, մահուան ստոյգ պատիժ մը խոյս տալու համար, այս անապատին խորը եկած պահոււթած, «արտաքոյ օրինաց» (outlaw) ոճրագործներ կրնային ըլլալ: Փորձառութիւնով գիտէի որ այդ կարգի մարդերու ճշմարիտ դաղթականութիւններ գոյութիւն ունին, որոնք ամերիկեան

անապատին ամենախոր մտնութիւններուն մէջ կ'ապրին և կը կաղմնն զինեալ ու ամէն բանի մշտապատրաստ խումբեր. որոնց շատ վըտանդաւոր է հանդիպիլը: Անոնցմէ՝ ոմանք բաւական ատեն աւաղակութիւնով ու մարդասպանութիւնով ապրելէ ետքը անձաւ բաղմացած են և քիչ քիչ կաղմակերպուած համայնքներու են վիճակափոխուած: Ասանկ համախմբութիւններու մէկէ աւելի անգամներ էի հանդիպած Միսսիսիպի վերի մասին վրայ, վերէն վար, երբոր փայտի լաստեր կ'իջեցնէի ջուրին վրայէն դէպի Նոր-Օրլէան. պատահած էր նաև որ օձիքս յաջողած էի ազատել անոնց ձեռքէն, արիւն թափելով՝ միայն, անոնց քաջասրտութիւնը ու անգլխութիւնը նմանապէս ծանօթ էին ինծի:

Ատով հանդերձ, նորէն հոգս պիտի չընէի զանոնք ու չի վախնայի անոնցմէ, եթէ Լիլիէն հետս չըլլար. բայց միմիայն խորհելով թէ ի՞նչ պիտի ըլլար անոր վիճակը՝ եթէ մենք յաղթուէինք ու ես մեռնէի, մաղերս կը յցուէին գլուխիս վրայ և առաջին անգամ ըլլալով, վախ ըսուած բանը ճանչցայ: Արդարեւ, համոզուած էի որ, եթէ այդ մարդիկը իրաւոյն «արտաքոյ օրինաց»ներ էին, անոնց հետ կռիւ մը անխուսափելի էր, ինչ որ այնչափ դիւրին բան չէր գլուխ հանել յաջողութիւնով, որչափ հնդիկ խումբերու հետ: Այդ պատճառով մարդերուս իմացուցի հաւանական վտանգը և անմիջապէս պատերազմական կարգով շարեցի զանոնք: Բացարձակապէս միտքս դրած էի կամ մեռնիլ կամ կործանել աւաղակներու այդ բոյնը:

Եւ սակայն, հովիտին խորէն տեսեր էին մեղի և երկու ձիաւոր, քառասմբակ դէպի մեզ կը սուրային: Շունչս բռնուեցաւ անձկութենէս: Բայց եթէ «արտաքոյ օրինաց» ըլլային՝ պատուիրակ պէտք չէին խրկիլ, կը մտածէի:

Իրաւ ալ գործերնիս ամերիկեան մուշտա-

կի ընկերութեան մը որսորդներուն հետ էր, որոնք ամառուան իրենց կայքը հաստատած էին հող: Կռիւի տեղ բարեկամական ասպնջ-ջականութիւն մը կըսպասէր մեզի, ինչպէս նաեւ ամէն տեսակ օղնութիւն, անապատի այդ անտառ բայց պարկեշտ հրացանածիգնե-րուն կողմէն: Թեւաբաց ընդունեցին մեզի և մենք շնորհակալութիւն յայտնեցինք Աս-տուծոյ, մեր թշուառութեանը վրայ գլխա-լուն և մեզի հանգիստի ասանկ ախորժելի վայր մը առաջնորդած ըլլալուն համար:

Կրանտ Ռիվիէն Պլէօէն մեկնելէս ի վեր մէկուկէս ամիս անցած էր: Մենք ուժասպառ եղած էինք, շորինքը կիսամեռ էին. բայց հող պիտի կրնայինք գէթ ամբողջ չաբաթ մը մնալ, կատարեալ ապահովութեան մէջ, հանգչելու ու կազդուրուելու, ինչպէս նաեւ անասուններուն առատօրէն թարմ խոտ հայ-թայթելու համար:

Մը. Թորթըն, որսորդներուն պետը, բա-րեկիրթ ու լայնախոհ մարդ մըն էր: Երբ տեսաւ որ իր գործը մարդագետիներու կողմ բողբոխողի մը հետ չէր, անմիջապէս բար-եացական ու փութկոտ ընթացք մը բռնեց և նոյն իսկ իր անակը դրաւ Լիլիէնի տրամադ-րութեանը տակ, երբ հասաւ եղաւ որ խեղճ աղջկիկ միծապէս կը տառապէր ճամբորդու-թեան յոգնութիւններէն:

Երկու օր թող չի տուի որ անկողինէն ելլայ: Այն աստիճան յոգնած էր որ առաջին քսանըջորս ժամերուն գրեթէ բնաւ չի բացաւ աչքերը, և ես ալ այդ պահուն ամէն զգու-շութիւն ըրի որ ոչինչ գայ խուլիկ իր հան-գիստը: Իր անարին վերեւը նստեցայ և մինչ-չեւ վերջը անքուն հակեցի: Երկու օրուան մէջ, ինքզինքը բաւական գտաւ և կրցաւ դուրս ելլալ, բայց չի թողուցի որ, որ եւ է աշխատութիւնով մը զբաղի: Մարդիկս, առ-ջի օրը, առանց կարգի կանոնի, հոս ու հոն պառկեցան քնացան, քարերու պէս անշարժ: Անկէ ետքն էր որ, սկսան լնամբով շարել վակօնները, հազուադէպ նորոգել և ճերմա-կեղէններ լուալ:

Որսորդներու իջեւանին մէջ, մեր այս կայքին ատենը բաւական կազդուրուեցանք:

Մխիթարական հզօր զգացում մը ծաւալած էր մեր սիրտերուն մէջը, ինչու որ տակաւին չէինք գուշակեր այն փորձանքները որոնք կախուած էին մեր գլուխին վրայ «Աւետեաց երկիրը» հասնելէ առաջ:

Մեկնած ատեննիս, երկարօրէն դիտարկ-նիս շարժելինք օդին մէջ ի պատիւ պարկեշտ այդ Բանատացիներուն: Այդ օրուան յիշա-տակը, անջինջ կերպով դրոշմուած է սիրտիս մէջը: Ինչու որ հազիւ ճամբայ ելած էինք, երբ Լիլիէն թեւերը անցուց պարանոցիս շուր-ջը և հրաշալիօրէն կարմրողելով, անուշ բա-ռեր մըմնջեց ականջիս: Իր ոտքերուն առ-ջեւը նետուեցայ անմիջապէս, մինչեւ հողիս խորը յուզուած և երկիւղածօրէն իր ծունգե-րուն փարեցայ:

Որսորդներուն բանակետէն մեկնելէս տասնըհինգ օր ետքը Ութահի սահմանագը-լտուն մօտեցանք: Ուղեւորութիւնը դժուարին էր տակաւին, և ամէն տեսակ յոգնութիւն-ներ ու դառնութիւններ անխնայ կը հարուա-ծէին մեզի և սակայն աւելի աշխուժով կ'ա-ռաջանայինք: Տակաւին պէտք էինք անցնիլ Ապառաժ Լեռներուն Արեւմուտքի մասը որ ամբողջ պղտիկ լեռնաշղթաներու ցանց մը կը կազմէր:

Ջուրի երկու մեծ հոսանքներ, Կանանջ Գետը ու Մեծ Գետը (որոնց միաւորումէն կը ծնի անսահման Քօլօրատոն) և այդ գետերուն բազմաթիւ ճիւղերը, ամէն կողմէն կը կըտ-րատէին լեռնոտ այդ երկիրը և բաւական դիւրանցանելի ճամբաներ կը պեղէին չորս-դին: Այդ անցքերուն շնորհիւ է որ, քիչ ա-տենէն հասանք Ութահի լիճք, որուն մօտէն կըսկսին Ադի Հոդերը:

Ալ ատկէ ետքը, միօրինակ, մթամած ու արտակարգ երկիր մը չըջապատեց մեզ. լեռկ լեռնանձայրերով պատած անհուն բարձրաւան-դակներ: Այդ լեռնակատարները իրարու կը յաջորդէին անվերջ ու իրերանման և ակնար-կող ու երեւակայութիւնդ կը յոգնեցնէին: Այս անապատին մէջ տեսակ մը դժնդակ տըրտ-մութիւն, և անանկ մերկ ամայութիւն մը ու թմրածութիւն մը կը տիրէ որ ակամայ կը խորհիս կտակարանի անապատներուն: Լիճե-

րուն ջուրերը աղի են սաստիկ, ու ափերը չոր ու ամուլ: Ծառ չես տեսնար բնաւ հոն. հողը, անհուն տարածութիւններու վրայ, աղ ու բոթաս կուտայ դուրս, կամ կը ծածկուի լայն մազոտ տերեւներով գորշագոյն տեսակ մը բոյսով՝ որ կ'պնեն ու աղի հիւթ մը դուրս կուտար: Ուղեւորութիւնը հող, դադող ու որեւսպառող բան մը եղաւ. երկարատե շաբաթներ անցան առանց ամենափոքր փոփոխութիւն մը առաջ բերելու չըջանկարին մէջ. տափաստանները տափաստաններուն, ժայռերը ժայռերուն կը յաջորդէին, առանց բուսակնութեան նշոյլի և մահասարսռու միօրինակութեան մը մէջ: Անդամ մը եւս զգացինք որ ուժաթափ ըլլալու վրայ էինք: Մարգագետինին մէջ ձանձրացած, յոգնած էինք կեանքի սաստիկ միօրինակութենէ մը. հոս նոյն բանը կ'ըլլայինք մեռելութեան միօրինակութենէն:

Շատ չանցած, մարդիկս ամէն բանի նշկատմամբ զարմանալի անտարբերութիւնով մը համակուեցան: Անցանք Ութահէն, միշտ նոյն լքուեր երկիրը. Նէվատա մտանք, նոյնն նոյն բանը: Արեւը այնչափ սաստիկ էր որ, դուռնուս վրայ կ'սկծագին այրուածքի մը սպաւորութիւնը կ'ունենայինք. լոյսը, աղով ամբողջովին թրծուած հողի մը փայլուն մակերեսին վրայ ցոլանալով, աչքերնիս կը շլացնէր, և մթնոլորտին մէջ կը ծփծփար չես գիտեր ուրկէց եկած տեսակ մը փոշի, որ աչքերնուս կողերը կ'այրէր: Փոխադրութեան ծառայող կենդանիները, ատեն ատեն գլուխն կը խոնարհեցնէին վար, ժայռի կտոր մը կը խածնէին և կայծակէ զարնուածի պէս գետինը կ'իյնային արեւահար: Մարդիկ հազիւ կրնային ինքզինքնին բռնել, այն ալ խորհելով որ ութը տառը օրէն պիտի կարենայինք նշմարել Սիէրրա-Նէվատան որուն ետին կը ծածկուէր այնքան բաղձացուած Բալիֆօրնիան:

Բայց օրերը ու շաբաթները կ'սնցնէին, հետզհետէ աւելի դժնդակ աշխատութիւններու տակ ընկճելով մեզ: Եղաւ ատեն մը, ուր ա'լ հարկադրուեցանք երեք վակօն ճամբան ձգել, դանոնք քաշող անասուն չըլլալուն համար:

Օհ, դժբաղդութեան ու թշուառութեան երկիր մը եղաւ աղ մեղի համար: Նէվատաի մէջ, անապատը աւելի անծայրածիր և մեր վիճակը աւելի սոսկալի եղաւ, ինչու որ հիւանդութիւնն ալ յանկարծ եկաւ մտաւ մեր կարգերուն մէջ:

Առտու մը, եկան իմաց տալ ինձ որ Սմիթ հիւանդ էր: Շիտակ իր քով փութացի և մեծ զարմացումով տեսայ որ ժանտատենդէ բռնուած էր: Այդքան յաճախիկ կ'ըմայայփոխութիւն մը չէր կրնար անվտանգ ըլլալ. չարաչար աշխատութիւնը, հակառակ առնուած մանրմունք հանգիստներու, իր հետեւանքներով զգալի կ'ըլլար, և հիւանդութեան սերմերը ծայրայեղ յոգնութեան շնորհիւ շուտով կը բաղձանան: Լիլիէն հակառակ ամէն արգելքի ու խնդրանքի՝ ուղեց իր ձեռքով խնամել ծերունին որ հօր մը պէս կը սիրէր զինքը: Հողիւս խորէն կը դողդոջայի իրեն համար, բայց չէի կարծեր որ իրաւունք ունենամ, զայն իր քրիստոնեայի պարտականութիւնը կատարելէ արգելելու: Գիշերով ու յորեկով հակեց Սմիթի մահիճին քով, Մօրքուր կ'օղւէրի ու Մօրքուր էթքինսի հետ, որոնք իր օրինակին հետեւեցան: Եւ սակայն երկրորդ օրը, ծերուկ հանքագործը ինքզինքը կորսնցուց և ութերորդ օրը մեռաւ Լիլիէնի բազուկներուն մէջ, Արցունքներ պոռթկալով թաղեցի զայն, որ ոչ միայն աջ բազուկս էր եղած, այլ Լիլիէնի ու ինձի համար հայրական անձնութիւն մըն էր ցցուցած: Ալ ամէնքս կը յուսայինք որ այս փորձութենէն ետքը Աստուած պիտի ողորմէր մեզի, մինչդեռ մեր տուայտանքներուն ծարն էինք դեռ ծրարոց. այդ վայրկեանէն սկսեալ, բոլոր մարդիկս մէկիկ մէկիկ հիւանդ պառկեցան, և անկէ ետքը ալ օր չէր անցնէր որ անոնցմէ մէկը դերեղման չիղնէինք:

Եւ սակայն յուսահատական անապատին մէջէն գէշ աղէկ ճանքանիս կը շարունակէինք, մինչ անդին ժանտատենդը կը հալածէր մեզի և միշտ նոր զոհեր կը խլէր: Իր կարգին Մօրքուր էթքինս հիւանդացաւ, բայց Լիլիէնի բուռն ճիգերը ու յարատե խնամքները ազատեցին զայն ախտին ճիրան:

ներէն: Սիրտնատնումէս հոգիս կ'ելլար, և երբ դեռատի կիսն կը հսկէր ակտաւորին սընարին քով և ես կ'աշխատէի բանակետողին պահպանութեանը, մէկէ աւելի անգամներ, ծնրադրեցի մութին մէջ և սրտաբուլիս աղօթքներ ուղղեցի երկինք: Երբ մինակ ըլլայինք մեր վակօնին մէջ, յանկարծ կ'արթննայի քունէս, աչքերս մղձաւանջով լեցուն և յստակօրէն կը տեսնայի հիւանդութեան ուրուականը՝ որ մեր կտաւէ դռնակը վեր կը վերցնէր և Լիլիէնի վրայ կը խոյանար: Իրմէ հեռու եղած ատենս, — աւա՛ղ, օրուան մեծ մասը հեռու էի իրմէն, — միեւնոյն տանջանքին կ'ենթարկուէի որ մէջքս կը կտարէր, ծառի մը պէս որ կը ծռի ուրականին սաստկութեանը տակ:

Բայց Լիլիէն, հիւանալի կորով մը ու անվհերք քաջասրտութիւն մը ցոյց կուտար: Հոն ուր ամէնէն հաստաբաղուկ մարդերը անգամ պիտի չի դիմանային, կը տեսնայի զայն, իրաւ նիհարցած, տոգոյն, իր ճակատին վրայ մայրութեան նշանները աւելի խորունկ կերպով դրոշմուած, բայց միշտ քաջառողջ, ու վակօնէ վակօն վազելով իր խնամքները սփռելու համար: Այլ ոչ իսկ կը համարձակէի իր որակաւորութիւնը հարցնել, իր ուսերուն կը փարէի և երկարօրէն կը սեղմէի զայն կուրծքիս վրայ: Բայց երբ խօսիլ ուղէի, կոկորդս կը սղմուէր և ոչ իսկ բառ մը կրնայի արտաբերել:

Սակայն և այնպէս, սիրտս նորէն աստիճանաբար լեցաւ. մոռցայ Ս. Գիրքին սաստկալի խօսքերը. «Այն որ Արարիչէն աւելի արարածին յարգ կը մատուցանէ...»:

Մօտենալու վրայ էինք Նիպրասքաի արեւմտեան մասին՝ ուր Մեռեալ Լիճերու գօտիէն անդին, ա՛լ կը վերջանային Ադի Հողերը ու ժեռուտ անապատները, և աւելի գեղատարած, աւելի դալարապատ ու աւելի արգասաբեր մարգագետիններ կըսկսէին: Երկու օրի չափ, ա՛լ հիւանդ չունեցանք մէջերնիս, և յուսացի որ մեր աղէտքները վերջ գտած էին ալ: Ափսո՛ս:

Ինը հոգի մեռած էին, վեցն ալ հիւանդ էին դեռ. փոխանցուելու վախէն, կարգապահութիւնը թուլցած էր. գրեթէ բոլոր

ձիերը դիտապաստ լինած էին և ջորիները աւելի կմախքներու կը նմանէին քան թէ ողջ անասուններու: Մեր նախապէս ունեցած յիսուն վակօններէն երեսուն երկուքը միայն, անապատին մէջէն կը շարունակէին իրենց ճամբան: Միւս կողմէն ալ ձիաւորներու ոչ մէկը կուզէր հեռանալ կարաւանէն և որսի երթալ, վախնալով որ մենէ հեռու, միամիտակ, կը հիւանդանար մէկէնիմէկ և անխնամ կը մնար անապատին մէջ: Մեր պաշարները կըսպառէին արագօրէն և գրեթէ հատնելու վրայ էին: Խնայողութեան համար ամբողջ շաբաթ մը սև սկիւռներ միայն կերանք որոնք չէին փախչեր մեր մօտեցած ատենը և դիւրութիւնով կը բռնուէին: Իրենց նողկալի միւր, սիրտերնիս այն աստիճան կը խառնըցնէր որ պատառը շատ դժուարութիւնով բերաննիս կը տանէինք: Ձգէ որ շատ չանցած, ան ալ փնտռեցինք ու չի դառնք:

Բայց լիճերէն անդին, երէն քիչ մը աւելի առատ էր և անասուններուն ուտելիք խոտը աւելի յարմար: Նորէն հանդիպեցանք Հնդկիներու, որոնք հակառակ իրենց սովորութեան, բացէ ի բաց և ցորեկ ատեն վրանիս յարձակեցան: Այս անգամուանները կանոնաւոր զէնքեր ունէին և մարդերէս չորսը մեռցուցին: Ես իսկ, այդ կոխին մէջ, գլուխիս կերայ տապարի հարուած մը այն աստիճան ուժով որ, իրիկուան, արեւնահոսութեան պատճառով խորունկ նուաղումի մը մէջ ինկայ: Լիլիէն խնամեց զիս, աներեւակայելի անձնուիրութիւնով մը: Երեք օր անընդհատ տարածուած ու անշարժ մնացի վակօնիս մէջ, երեք օրեր՝ զորս հակառակ անհնարին տառապանքներու, միշտ հաճոյքով կը յիշեմ, անոր համար որ Լիլիէն միշտ անբաժան եղաւ քովէս: Իր ձեռքերը կը պազնէի, երբ ան վիրակապերս կը փոխէր և աչքերս միշտ յառած էին իր աչքերուն վրայ: Չորրորդ օրը թէև կարող էի ձի հեծնալու, բայց հոգիս տկարացած էր և դիտմամբ կ'երկարաձգէի սիրալի ծուլութիւնս, քիչ մը աւելի երկար ատեն անոր հետ ըլլալու համար:

(Շարունակելի)

Արսոմսկի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱՅԻ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքադով արտօնուած

Կեդրոնական Բեղերապուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ եւ ՇՈԳԵՆԱԻՌՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ եւ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կա- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած
Երաշխաւորութեան գումար աւելի քան

10,666,667 Փրանք
137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց ամար դիմել կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Դալաթիա, — եւ Դալաթիոյ Դորձակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Բարափին վրայ:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԵՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք աւճամբ փորձած են անոր յատ- կութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Աբէռի տարրալուծած է զայն եւ Թաշտէլէնի ու Գանլըքովաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգե- լով որ անոր ջրաշափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարու- թեամբ, այն ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուելով ու զմոտեւելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐԻՆ գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քի- միագէտ Տօքթ. Մանսիէ զատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տօքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուլի, Զէրրի, Սթէքուլի, Ավրիխանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Բարաքօվաքի, Բէլմօվ, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիդ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐՍ, Մեծ-Փողօց, Հալէպ խան, Թ. Դ. — ՊՈՒՆՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Եւրի Օսմանիէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բա- րաքօվաքի ջուր: Գինները շատ աժան են՝ ժողովրդեան դիւրամատելի ըլլալու համար:


Փորձի համար չի՛ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇԻ ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն առանհետեւ:

Սոյն հանրածանոթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները: Ամրան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ: չաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո'չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

20-30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննեալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միացնամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱԸ

Զարլը Պօյու, Թ. 120.

Գասերը եւ նորոգութիւնք մը:

Կասաբեալ Երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆաղափներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՍԻՆԿԷՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ
ՎԱՅՏՈՒՄ
ԵՐԱՅԻՄ

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքիեն, Հայերեն, Ֆրանսերեն եւ Յունարեն լեզուներով
Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի
խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լարակազմ	3	դր.	{ 25 օրինակէն աւելի զնոդ- ներուն զոնացուցիչ զեղջ
Ընթիւ լարակազմ	5	»	
ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ բոքա-
վաճառներու իով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

1904

34 X 15 սանթիմէր մեծութեամբ՝
ՍԵՂԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ. Թուրքիեն,
Հայերեն, Ֆրանսերեն եւ Յունարեն
լեզուներով

Յուշատետրին սկիզբը աւելցուած են
կարկ մը կարեւոր տեղեկութիւններ որք
անհրաժեշտ են ամէն գործի մարդոց :

Ընթիւ եւ զեղեցիկ լարակազմ

Գին 3 դր.

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց բո-
լոր Գրավաճառներու եւ Թղթավաճառ-
ներու իով :

Հրատարակիչ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20 Զաւմաճերար, Կ. Պոլիս

Ամենանոյս մքեք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
ըրջանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեական ամէն
յանձարարութիւն գոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասը տարիներու մէջ դըպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հին մեթոտներուն
մէջ :

Ջերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փա-
թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատոմոս ընծայած առաւե-
րութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն :

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակում)

ՊԱՏՈՒՄԿԱՆ ԵՍԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԳՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԿՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի (ի ԳԱՐԹԱԶԻՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Մովային ապահովագր. ԸՆԿ. (ի ձեռնով)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քուէսի Լիօնի

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Իրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ Խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԵՐԱՄԱՐՈՅԺ ԳՈՂՈՅԺԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

ԳԵ. ԵՇ. ՆԲ. օրերը առաւօտեան կանոն-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՐ. օրերը 6 Են մինչեւ 11 1/2

Նիւրայի օրերը ժամադրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԹԻՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Զաւմամբերը բիւ 64

ԸՆԹԱՅԻ ԸՆԹԵՐՅ.— ԴՊՐՈՅԻ ԳԻՐԲԸ.

Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ձօն պատկերներով ու բաղադրան նիւթերով հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դր. Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ իւր ձրի կը ստանան, 50 փարայ բօսթի ծախք ղրկելով: Ուղղակի Գրատան ղրկողներուն կաճեալ ղեղչ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անդդ-Հայ Բաղիրքը որ սպառուելու վրայ է, միմիայն յիշեալ գրա. տունը կը գտնուի, ուր ղրկուելու են պէտք ունեցողները:— Գին 80 դր:

Ամեն վնասում կանխիկ է:

6—10

Վ. Յ. ՅԵՐԱՅԵԱՆԻ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանան Վաճառականական պիտոյից, սպազրական գործերու պատրաստութեան հոգը:

ԳԻՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 50% ղեղչ.

Ծանօթ Վաճառականաց, ապաւինիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ: Զամ ձեռքով ղրկուած, ղրկուած

Մանրամասնութեանց համար ղրկել

Վ. Յ. ՏԵՐԻՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՅ ՀԱՆՐԱԳԻՏԱ.

ԿԱՆ 1904 տարւոյ.— Գ. Պաղտատարեանի սոյն ընդարձակ Օրացոյցը որ երկարամեայ կանոնաւոր հրատարակութեամբ ծանօթ է, յառաջիկայ տարւան համար ի լոյս ընծայուած է ձօն բովանդակութեամբ մը որ ամէն կարգի ընթերցողներու համար օգտակար ու շահեկան կը դարձնէ զայն: Գին 3 դր: Հրատարակուած է նաեւ համառօտը: Վաճառման Կեդրոնատեղի Յ. Մաթէոսեան Թղթովաճառանոցը, Կ. Պոլիս: